ՄԵՐ ՀԱՍՄԻԿԸ

Չափազանց ծանր ու դժվար է լավ ընկերոջ, փայլուն մասնագետի և ափեափ կյանքով ու կենսախնդությամբ ճառագող մարդու մասին անցյալ ժամանակով խոսելը: Մեր Հասմիկն այդպիսին էր: Միշտ պատրաստակամ էր, անընդհատ շարժման մեջ էր նրա ստեղծագործ միտքը: Իր ուսերին առած ծանր հոգսը կարող էր մոռանալ և հասնել ընկերներին ու ծանոթներին: Լուսավոր և առինքնող կերպար էր, այրվեց կերոնի պես, լույս տվեց շրջապատին՝ անկատար թողնելով բազում ծրագրեր ու երազանքներ:

Կյանքից շատ անժամանակ հեռացավ երաժշտագետ-ֆոլկլորագետ, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի ավագ գիտաշխատող, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղի դոցենտ Հասմիկ Պարույրի Ափինյանը:

Հ.Ափինյանը կենտրոնի հիմնադիր գիտնականներից մեկն էր, որն իր հոգևոր և մասնագիտական բոլոր կարողությունները նվիրաբերեց հայ ազգային երաժշտության և, մասնավորաբար, Շիրակի ժողովրդական և ժողովրդապրոֆեսիոնալ երաժշտական նմուշների գրառման, համակարգման և ուսումնասիրման գործին:

Ծնվել էր 1957թ. Լենինականում՝ ծառայողի ընտանիքում: Միջնակարգ դպրոցը ավարտելուց հետո փայլուն ուսումնառություն էր ստացել Լենինականի Ք.Կարա-Մուրզայի անվան երաժշտական ուսումնարանի երաժշտության տեսության բաժնում, որտեղ նրա մասնագիտական հեռանկարի ուղղորդման գործում նշանակալի դեր է կատարել վաստակաշատ երաժիշտ-մանկավարժ, կոմպոզիտոր Ազատ Շիշյանը:

1978-1983թթ. նա ավարտում է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի երաժշտագիտական ֆակուլտետը՝ ուսանելով երաժշտագետ-ֆոլկլորագետ, պրոֆեսոր Մարգարիտ Բրուտյանի մասնագիտական դասարանում: Ահա այս տարիներին էր, որ Հ.Ափինյանը որպես մասնագիտական ասպարեզ ընտրեց երաժշտական ֆոլկլորագիտությունը և բուհական ավարտաճառը նվիրեց հայկական ժողովրդական ստեղծագործության բարդ երգատեսակներից մեկին՝ գրեթե չուսումնասիրված օրորոցային երգի ժանրային տիպաբանական հետազոտությանը: Ուսումնառության ավարտից հետո էլ Հ.Ափինյանը մնաց իր ուսուցչապետի նվիրյալ սանը, և անցած ճանապարհին նրա բոլոր հաջողությունները մշտապես մնացին Մ.Բրուտյանի տեսադաշտում, արժանացան նրա դրվատանքին և ուշադրությանը:

Չնայած մայրաքաղաքում կրթությունը շարունակելու և աշխատելու լավագույն հնարավորությանը՝ Հ.Ափինյանը վերադարձավ ծննդավայր և միացավ երիտասարդ այն գիտնականներին, որոնց համախմբել էր Լենինականի «Կումայրի» պատմա-ճարտարապետական արգելոց-թանգարանը մի պայծառ գաղափարի շուրջ. վերականգնել և պահպանել պատմական Ալեքսանդրապոլի պատմամշակութային դիմագիծն ու զերծ պահել այն ոչնչացումից ու աղավաղումներից: Ահա այս ժամանակ էր, որ Հ.Ափինյանը նվիրվեց հարազատ քաղաքի մշակութային համալիրում երաժշտաբանահյուսական և աշուղական արվեստի նմուշների գրառման և համակարգման աշխատանքներին՝ ձեռնամուխ լինելով հայ երաժշտագիտության մեջ սակավ ուսումնասիրված մի ոլորտի՝ քաղաքային ժողովրդական երաժշտության ուսումնասիրության, նրա հիմնախնդիրների արծարծման և զարգացման արդի միտումների հետազոտությանը:

Շուտով երևան.եկան նրա հետևողական աշխատանքի առաջին արդյունքները. 1989թ. Լենինգրադում հրատարակվեց «Հայ երաժշտության դիսկոգրաֆիան 1916-1989թթ.» ժողովածուն, որի համահեղինակներից մեկը Հ.Ափինյանն էր:

1997թ., զինված մոտ 15 տարվա գիտական աշխատանքի հմտություններով, նա վստահորեն մուտք գործեց նորաբաց ԳԱԱ ՇՀՀ կենտրոն, ուր իր գործընկերների հետ նվիրվեց երաժշտաբանահյուսական գիտական ծրագրերի, Շիրակի երաժշտական արվեստի ուսումնասիրության մեթոդաբանության մշակման, տեղեկատվական արժեքավոր բազայի ստեղծման գործին:

Հ.Ափինյանի հեղինակած շուրջ երկու տասնյակ հոդվածներն ու հրապարակումները արծարծում են Շիրակի ծիսական երգերի, մարզի առանձին գյուղերի հրաժշտաբանահյուսական նկարագրի, ժողովրդական կատարողական արվեստի ու նվագարանաշինության առանձնահատկությունների, օրորոցային երգերի որոշ հորինվածքային-տաղաչափական խնդիրների, Շիրակի արդի երաժշտական բանահյուսության գիտամեթոդական ուսումնասիրության կարևոր հարցեր:

Տևական աշխատանքի շնորհիվ նրան հաջողվեց ի մի բերել Շիրակում ներկայումս ստեղծագործող աշուղների ստեղծագործական կյանքի կարևոր փուլերը: Մի առանձին ոգևորությամբ ձեռնամուխ եղավ աշուղ Իգիթի ստեղծագործության՝ իր տեսակի մեջ եզակի ուսումնասիրությանը: Աշուղի կյանքին ու գործին էին նվիրված նրա մի շարք հաղորդումները միջազգային ու հանրապետական գիտական նստաշրջաններում ու պարբերականներում:

Սակայն նրա «կյանքի գործը» «Հայ օրորոցային երգը» թեմայով ատենախոսությունն էր, որին ձեռնամուխ էր եղել մեծ նվիրումով և իրականացման հաստատակամությամբ: Ցավոք հանկարծահաս մահն այն անավարտ թողեց, ինչպես անկատար մնացին նրա բազում մտահղացումներն ու երազանքները:

Հասմիկ Ափինյան մարդու և գիտնականի պայծառ հիշատակը միշտ վառ կմնա իր գործընկերների սրտում: Նա կա, ապրում է մեր կողքին, մեր հոգիներում՝ լույսի պես մաքուր ու պայծառ:

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի ...»

Ս. Հայրապետյան
Հ. Հարությունյան